ԱՌԱԿՆԵՐ

ՄԽԻԹԱՐ ԳՈՇ

(12-րդ դար)

Մխիթար Գոշը («Գոշ» բառը նշանակում է սակավամազ) ծնվել է Գանձակում: Գոշի իմաստության համբավն այնքան է տարածվել, որ շատերը հեռավոր վայրերից եկել են աշակերտելու նրան: Նա մեծ հեղինակություն է վայելել ոչ միայն մտավորականների, այլև ժամանակի քաղաքական ու պետական գործիչների շրջանում:

Ժամանակակիցներն ու հետագա սերունդը Մ. Գոշին մեծարել են «այր իմաստուն ու հեզ», «մեծ վարդապետ» և այլ պատվանուններով: Մահացել է 1213 թվականին Նոր Գետիկում (այժմ՝ Հայաստանի Գոշ գյուղում): Հեղինակել է մոտ 190 առակ: